

3355

ՈՒՂԱՑԻՈՒԹԵՐԻ ԳՐԱԳՈՐԾՈՒՄ


6

Վ. ԴՄԻՏՐԻՅԵՎԱ

ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ՄՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ



ՍԻՆԱ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1925

23 SEP 2009

7-574-12  
1  
7-53

ԳՐԱՏԱՐԱԿՄԱՆ  
ՎՐԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ.

ՄՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1020  
21

В. ДМИТРИЕВА  
ТЕМНОТА и СУЕВЕРИЕ  
на армянском языке.

1/2

Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.

ՄԻԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎԱՆՔՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿԱ

1925

03 APR 2013

3355

Книга набрана и отпечатана в З-й  
типографии Госиздата С. С. Р. Арме-  
нии. Москва, Армянский пер., 2.  
В количестве 5000 экземпляров.  
Гл-влит № 47000.



36603-62

ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՈՒ  
ՄԵՌՆՈՒՄ.

Մեր գյուղերում մինչև հիմա յել շատ հին  
ու փթած սովորություններ կան: Որինակներ—  
ինչքան կուզեք հիվանդանալիս բժշկվում են հե-  
քիմների մոտ, հավատում են, վոր անտառի և  
տան վոգիներ կան, հավատում են, վոր «աչք  
տալ» կա և այլն:

Այս հին սովորությունները ժողովրդի մեջ  
մնացել են այն պատճառով, վոր ցարի կառա-  
վարության ժամանակ գյուղացուն խավարի և  
տգիտության մեջ եյին պահում. չեյին թողնում,  
վոր նա աչքը բանա, կարդա, ուսում առնի, աշ-  
խարհից բան հասկանա:

Առաջները գյուղերում շատ եյին տարած-  
ված այն գրքերը, վորոնց մեջ համբերությունն  
ու հնագանգությունն եր գովարանվում, մեկ  
ել՝ թագավորին հավատարիմ ծառայելը: Այդ գըր-  
քերը ազատ մուտք ունեյին գյուղացիների մեջ:

Այս բոլորի հետեվանքն այն յեղափ, վոր  
գյուղացիության մեծ մասը, մանավանդ կա-  
նայք, մինչև հիմա յել անգրագետ են: Ծնորհիվ

այդ անգրագիտության, մինչեւ որս ել գյուղացիների մեջ շատ անմիտ հավատալիքներ են մնացել։ Ահա այդ մասին ե, վոր խոսվում ե այս գրքի մեջ։

Գյուղացու կյանքը դեռ կարգի տակ չի ընկած։ Գյուղացին շատ անգամ իր բազմանդամ ընտանիքով սեղմված ե մի փոքրիկ խրճիթի մեջ։ Լինում ե, վոր տանը, մարդկանց հետ կողք-կողքի, տեղ ունեն հորթերն ու զառները, յերբեմն ել կովերն ու յեզները։ Քիչ տներ կան, ուր ամենքն ել քնելու իրենց տեղն ունեն։ պառկոտում են իրար կողքի մի տեղում և վրաները մի փալաս գցում։ Քնում են նույն կազերտի կամ քեչայի վրա, ուր ցերեկն են աշխատում։ Սրանից ել գյուղացու խրճիթից այնպես վատ հոտ ե գալիս։

Այս կեղտոտությունից վոջիլներ ու բաղլինջներ են առաջանում, դրանց միջոցով ել՝ զանազան վարակիչ յեվ վտանգավոր հիվանդություններ տարածվում, ինչպես, որինակ քոս, մալաքոր, բորտություն, աչքերի բորբոքում և շատ ուրիշ հիվանդություններ։

Հիվանդանալիս գյուղացին միանգամից չի մըտածում բժշկվելու մասին. ե՞հ, կանցնի ելի՛ Ամենքն ել կարդալ չգիտեն, վոր կարողանան իմանալ, թե հիվանդը ի՞նչով ե հիվանդ, ի՞նչ պետք ե անել։ Մոտերքում ել կարգացած,

գիտուն մարդիկ չկան. մնում են գյուղի հերիմն ու տերտերը։ Սրանց մոտ խորհուրդ հարցնելու համար ել գնում են այն ժամանակ, յերբ այլևս ճար չի մնում, ուժից, հալից ընկնում են։

Ահա հենց այստեղ ե, վոր կեղաի ու չքավորության մեջ, առանց լավ գրքի, առանց գրաճանաչ, խելոք մարդկանց, սունկի պես աճում են հիմար, սին հավատալիքները, անմիտ հեքյաթներն ու առասպելները՝ սուտ ու դորթ պատմվածքները։

Ասենք թե ընտանիքի անդամներից մեկը հիվանդացավ. ուր գնան հիվանդի ճարը տեսնելու։

Գնում են կախարդ, «ջաղուբազ» պառավի մոտ։ Սա ել վրան խոսում ե, ցաված տեղին կովի կու (աղբ) ե քսում, ածխաջուր ե խմացնում։ Թե բան ե, հիվանդը լավացավ,—լավ։ իսկ յեթե մեռավ,—ասել ե թե նրա ճակատի գիրն ել այդ եր։

Յեթե դեպք ե լինում, վոր անասուններն սկսում են լղարել, առաջ չեն գալիս, իսոտ չեն ուտում, կամ թե կթան կրվեն ե ցամքում, ձին կաղում,—ելի տան վոզին ե պատճառը։

Թե ինչքա՞ն դժբախտություններ են գալիս գյուղացու զլիսին իր տգիտությունից ու անգրագիտությունից, թե ինչքա՞ն շատ վստաներ ե ու-

Նենում նրա տնտեսությունը, թե ընտանեկան ի՞նչ վեճեր ու խոսակցություններ ե նա տառում,—այս մասին ամենքն ել զիտեն, միայն ինքը՝ գյուղացին ե, վոր շատ անդամ իրեն հաշվով չի տալիս, թե ի՞նչն ե այս ցավ ու կրակի պատճառը:

Ամենից շատ մանուկներն են վնասվում:

Յերեխան ծնվում ե առողջ ու ամուր կաղմվածքով: Փոխանակ առաջին մի քանի ամիսը միայն մոր կաթով մնելու, սկսում են և նրան հացով կերակրել: Շորի կտորի մեջ ծամած հաց են դնում յեվ տալիս յերեխային, վոր ծծի: Մինչդեռ կաթի առատությունից մոր կուրծքը լցվում, մեծանում ե, իսկ պառավերն ասում են, թե կաթը քիչ ե յերեխային:

— Չմտածե՛ս թե յերեխան միայն կաթով կարող ե կուշտ լինել: Ի՞նչ մի կշտացնող բան ե ե կաթը. ջուր ե, ելի: Դու ծամած հաց տուր նրան. հացով նա ավելի լավ առաջ կզա, թե չե՛ միայն կաթով դու նրան սովամահ կանես, —ասում են հարկան կանայք:

Յեվ ահա մայրը իր ձեռքով վնասում ե իր զավակի առողջությանը՝ մանկան ստոմոքսը լցնում ծամած հացով, վորը անմարս մնալով, աղիքների մեջ թթվում ե յեվ գունդ գունդ ամրանում: Յերեխայի փորը ուռչում ե թմբուկի պես, փորացավ ե առաջ գալիս, յերեխան աղիողորմ

լաց ե լինում, անհանգստանում և գոռում, ինչպես մորթվողն ե գոռում:

— Աչք են տվել, վճռում են պառավ կանայք, Պետք ե վրան աղոթած ջուր լցնել:

Մանկան վրա ջուր են սրբսկում, աղոթքներ քչփչում, «կարմիր կանաչ» գոտի կապում և բերանը նորից ծամած հաց խցկում:

Յերեխան սկսում ե լղարել, կաթը չի ընդունում, յետ ե տալիս, փխսում ու անդադար գոռում:

Այս ժամանակ պառավերը խորհուրդ են տալիս մորը յերեխայի «ջանը տաքացնել»: Թոնիրը լավ տաքացնում են (ինչպես հաց թխելիս) յեվ յերեխային մի յերկու ըոսկե թոնը մեջ մտցընում հանում:

Թոնիրից նրան հանում են կիսախեղդ վիճակում, այնպես վոր այլելս գոռալ ել չի կարող: Պառավերն ուրախանում են, վոր յերեխան ձայնը կտրեց:

— Բան չկա, հանգստացավ, հիմա գեպի լավը կդնա:

Բայց յերեխայի դրությունը չի լավանում, Մի քիչ հետո յերեխայի շունչը բերանն ե գալիս և նա սկսում ե իր լացն ու կոծը:

Մորը խորհուրդ են տալիս խաշխաշը ջուրը ղնել յեվ այդ ջուրը խմացնել: Այս թունա-

վոր խմիչքից շշմած, յերեխան թմրում ե, ախորժակից ընկնում, բան չի ուսում յեվ մոմի պես հալվում, մաշվում: Խաշխաշի ջուրը խմած յերեխաները շատ քիչ դեպքերում են՝ ավրում: Կամ հանգարտ ննջում են հավիայան, կամ թե՛ մեռնում սոսկալի զղաճգությունների մեջ: Իսկ պառավները — իրենց մխիթարությունն են հայտնում վշտացած մորը.

— Բան չկա, ջահել յես, ելի կրերես:

Կեղտոտ ծծակներից յեվ անկանոն մնվելոց գյուղացիների ծծկեր մանուկները շատ հաճախ հիվանդանում են այսպիսի հիվանդություններով. յերեխայի բերանն սկսում է վեր տալ, շրթունքները բորբոքվում են, բշտիկներ առաջանում: Պառավներն ասում են «բերանը ծաղկել ե»: Բըժկության մեջ այդ հիվանդությունը կոչվում է կաթնածաղիկ: Յեթե յերեխան միշտ նվազ ե, մաշված ու քամփած, կնշանակի բարակացավ ունի: Կա և այսպես կոչված «անզլիական հիվանդութուն», վոր գիտնականները կոչում են «բախիտ» հիվանդություն, վասկրախտ, յերբ հիվանդ յերեխայի վոսկորները անկանոն են: զարգանում և ծուռ ու մուռ մնում:

Յեվ ահա տեսնում ես, վոր մի որ վերջապես գեղջկուհին հիվանդանոց և բերում իր հիվանդ յերեխային: Նա բաց և անում կեղտուա բարուրը, և բժիշկը մի սոսկալի պառակեր և տես-

նում. Մի փոքրիկ դեմք, ծածկված կնճիռներով, սարդի վրտների պես բարակ վրտներ ու ծեռներ յեվ մեծ ու ուրած փոքրը, վորի վրա կապույտ յերակներ են յերեվում: Հազիվ կենդանի մի արարած: Հայն բացած աչքերով ասես նա հարցնելիս լինի. «Ի՞նչո՞ւ ինձ ծնեցիք»: Նա այլես չի կանչում, չի լալիս, այլ կամացուկ բաց ե անում իր անտառմ բերանը և թույլ ու ուժասպառ շարժվում իր տեղում:

— Քա՞նի տարեկան ե, հարցնում ե բըժիշկը:

— Յերեք տարու մեջն ե արդեն,—տխուր պատասխանում ե կինը:

Յերրորդ տարին... Այդ այն հասակն ե, յերբ առողջ յերեխաները արգեն քայլում են, վազում, խոսում, ծիծաղում՝ յերբ ուրախ են, և լալիս՝ յերբ ցավ են զգում: Իսկ այս մասկիկը հազիվ հազ շունչ ե առնում, ասես մարվող ճրագ լինի, վոր շուտով հանգչելու յեւ:

— Այս ի՞նչ որի ես հասցրել յերեխային, — հանդիմանելով ասում ե բժիշկը:

— Զար աչքից այսպես յեղավ, — պատասխանում ե մայրը: Նոր վոր ծնվեց՝ այնպես առողջ եր, ջանով: Մեր հարեան Զանին տեսավ չըտեսավ՝ ասաց. «Ի՞նչ լավ տղա ունես»: Զար աչք ունի նա: Այդ որից յերեխան բռնվեց: Առաջին մի քանի ամիսները շատ եր լալիս, հի-

մա ձայնն ել ե կտրել: Ել ինչ ասես, վոր մենք չարեցինք. թոնըի մեջ ջանը տաքացրինք, յոթն աղբյուրի ջրով լողացրինք, արևը մայր մտնելիս յերեք անգամ վրան աղոթք կապեցինք, վոչինչ չո՛գնեց: Ճա՛ր արա, տե՛ս, դոխտուր:

Ի՞նչպես ոգնես, ի՞նչ ճար տեսնես: Ուշ ե. վոչնչով չի կարելի ոգնել: Այդպիսի յերեխաները սովորաբար մեռնում են, այդպիսիները յեթե կենդանի յել են մոռմ, նրանցից, դուրս են գալիս նիհար ու վտիտ, սապատավոր (կուզիկ) յեկ ծոսոտանի այլանդակներ, վորոնք ընդունակ չեն վոչ սի աշխատանքի:

Յերբ բժիշկը բացատրում և մայրերին, վոր նրանց յերեխաների հիվանդությունը չար աչքից չե առաջացել, այլ նրանից, վոր ծծակով (ըմզուկ) են կերակրել,—կանայք նեղացած տառւմ են.

— Ի՞նչ ես ասում, դոխտուր, ի՞նչ ծծակ, ի՞նչ բան: Մեր յերեխաները ազնվականի ճուտեր չեն, նրանք ամեն բանի յել սովոր են:

Ինչքան ուզում ես դու այդ կնոջը համոզիր, վոր թե՛ աստծու կամքը և թե՛ գեշ աչքը այստեղ գործ չունեն, այլ ամեն ինչի պատճառը յերեխային անկանոն յեղանակներով կերակրելն ե, վոր բոլոր յերեխաները մեկ են, լինեն նրանք ազնվական թե՛ գյուղացի, վոր նրանց համար միաստեսակ ինամք պիտի տանել միատեսակ անոնդ տալ:

Այս խոսքերն անոգում են. ելի նրանք իրենցն են պնդում: Ասենք մեկ մեկ ել համաձայնվում են. բայց հերիք ե, վոր տանը պառավ նանը մի քանի հանդիմանական խոսքեր ասի, թե ինքը իր ձեռքով յերեխայի առողջությանը միասում ե: Բը-ժշկի խորհուրդները թողած՝ ելի իրենց հին յեղանակներով են կերակրում յերեխաներին:

Բոլորը գիտեն, վոր գյուղերում՝ ծծկեր յերեխաները ճանների պես են կոտորվում: Վո՞ր կնոջն ուզում ես հարցրու. կիմանաս, վոր մեկի տասը յերեխաներից հինգն ե մատցել, մյուսի յոթից՝ յերեքը. քիչ, շա՛տ քիչ կպատահի, վոր բոլորն ել կենդանի մնացած լինեն:

Իր ճնվելու որից մինչև մահը գյուղացին ճանձի պես խճճված ե զանազան մնահավատալիքների ցանցի մեջ: Ու թվում ե նրան, վոր իր կյանքի տերը ինքը չե, այլ այդ կյանքը կակառավարվում ե ինչ-վոր սարսափելի, անտեսանելի ու անիմանալի ուժերով: Մինչդեռ, իսկականը վոր հարցնես, վո՞չ մի այդպիսի ուժ չկա, և յեթե դրանց մասին մի քիչ մտածես ու սեը ճերմակից ջոկես,—կպարզվի, վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ այնքան վորոշ ե, այնքան պարզ, ինչպես լույսը:

Որինակի համար. գյուղում հաճախ կլսես, վոր անտառում կամ դաշտում քնած ժամանակ այսինչ մարդու բերանից ոձ ե սողացել կամ

գորտ մտել փորը և այնտեղ բռւն դրել ձագեր հանել ու հիմա մարդը հիվանդ եւ Պառավ հեքիթերի մոտ յերկար բժշկվելուց հետո, հիվանդը վերջը դիմում ե հիվանդանոց։

Գալիս, սուս ու փուս մի անկյուն ե բռնում, նստում ու սպասում, մինչև վոր բոլորը կցրվեն, և մոտենալով բժշկին կամացուկ փափսում ե.

— Ոգնեցե՛ք խնդրեմ, հոգիս դուրս յեկավ. ներս ոճ կա բռն դրած։

— Ի՞նչ ոճ։

— Յես ի՞նչ գիտեմ։ Ասում են, վոր գիշերը ձիերն արածացնելիս քնով եմ անցել, բերնիցս ներս ե սողացել։ Հիմի ել զգում եմ, վոր ենտեղ, ներսում շուռ ու մուռ ե գալիս. ել հանգիստ չունեմ։ Ինչ վոր ուստում եմ, յետ եմ տալիս։ Մեկ մեկ ել շունչս ե կտրում, գալիս, կրծքիս հավաքվում. ենպե՞ս ե շարժվում, վոր ել ասել չի լինի. ցավ ու կրակ։

Իհարկե, հիվանդին քննելիս վոչ մի ոճ ել չի հայտնվում։ Ոճն ել ոճ չի, այլ այսպես կոչված, տափակ ծինու, վոր բուն ե դրել աղիքների մեջ։ Բժշկության մեջ այդ ճիճվի անունը սոլիտեր ե։ Այդ ճիճուն վտանգափոր ե. դրանից մարդ նիհարում ե, ուժը կորցնում. յերբեմն նրա ուշը գնում ե, ասես ընկնափոր լինի և վոսկորների ցավ ե զգում, ջանը կոտրատվում ե։ Սոլիտերը ամենից շատ առաջանում ե խողի կամ յեղան մնից,

յերթ սոլիտերի օվերով վարակված միսը վորպես կերակուր գործ են ածում կիսայեփ, համարյա հում։ Հեշտ չե նրան դուրս քշել աղիքների միջից. այդ բանը կարող ե անել սիայն բժիշկը, առանձին ղեղի ոգնությամբ։ Հենց վոր այդ ճիճուն ընկնի, մարդը բոլորովին կառողջանա։

Մեր հիվանդանոցում մի հիվանդ կին կար, վորին պառավ կանայք հավատացրել եյին, թե նրա փորում գորտ կա նստած։ Նստած ե, գես ու գեն ե շարժվում և կոկում ե, մանավանդ այն ժամանակ, յերբ այդ կինը կուշտ ե ուտում կամ շատ ջուր խմում։ Բանից դուրս յեկավ, վոր նա ստամոքսի լայնացումն ե ստացել, ուրիշ վոշինչ Այդպիսի հիվանդի ստամոքսը շատ ձգված, լայնացած ե, և յեթե նա շատ ջուր ե խմում, ապա այդ ջուրը բխկրխկում ե, ինչպես շշի մեջ։ Ահա այս բխկրխկոցն ե, վորի համար ասում են, թե գորտն ե կոկում։ Այդ հիվանդությունը կարելի յե բժշկել. պետք ե միայն նրա ստամոքսը լվալ, վորի համար առանձին գործիք կա։ Հետո պետք ե դեղ տալ և մի ժամանակ զգուշացնել դժվարամարս կերակուր ընդունելուց և շատ ջուր խմելուց։

Մի ուրիշ կին հիվանդանոց եր բերել իր ծծկեր, յերեխային և հավատացնում եր, վոր նրա զիսի մեջ մուկ կա։

— Այ, լսեցե՛ք, լսեցեք թե ինչ ձայն ե գա-

լիս զլիսի միջից։ Ենպես և շարժվում ու ծվծվում, վոր վախս գալիս ե։ Այս աշխարհում իմ յերեխան—ել կյանք չունի..

Յեվ հանելով յերեխայի գլխակապը, նա ցույց ե տալիս գագաթը։ Գիտեք, վոր ծծկեր յերեխաների գանգի վոսկորները կակուդ են և քանի նրանք չեն ամրացած, գագաթի վրա, մի քիչ դեպի ցած, գանգի վոսկը ալելի փափուկ ե։ Յեթե ականջդ այդ տեղին դնես, թվում ե, վոր ներսում ինչ վոր բան կամացուկ աղմկում ե, պատերին զարնվում։ Այդ նրանից ե, վոր արյունը արյունատար յերակների մեջ լցվելիս վորոշ խոռվ աղմուկ ե հանում, ասես մի բան դողդողալիս լինի այստեղ։ Իր տպիտությունից այդ կինը յերակների զարկը մկան տեղ եր ընդունել։

Գյուղերում մի ուրիշ հավատալիք ել կա, վորը նույնպես հեշտ և պարզ կարելի յե բացատրել—Ասում են, վոր յեթե ծիու մազը ջրի մեջ ե ընկնում, ապա նու այստեղ կենդանանում ե յեվ յերկար ու բարակ ծիճու դառնում, վորը «մազաճիճու» ե կոչվում։ Իրը թե սոված ժամանակ այդ մազաճիճուն ծվում ե։ Այն տեղերում, ուր ջրերի մեջ մազաճիճուներ կան, իբր թե լողանալը վտանգավոր ե, վորովհետև այդ ճիճուն իսկույն ևեթ կպչում ե մարմնին, անցնում կաշվի տակը և այստեղ բազմանում։ Դրանից ել մարմնի վրա, մանավանդ ձեռքերին

իբր թե չանգովածքներ են գոյանում։

Մինչդեռ վոչ մի կենդանի մազ չկա յեվ լինել չի կարող։ Մարմնի և մատների վրայի չանգը վածքները առաջ են գալիս կամ կեղտոտ ասեղի ծայրով մարմնի այդ մասերը ծակելուց, կամ թե՝ բարակացավից և ուրիշ վնասվածքներից։

Մազաճիճու չկա, դա պառավների հնարած բանն ե։ Վո՛չ մի զեռուն, վո՞չ մի ո՞ կամ գորտ չի կարող մարդկային մարմնի մեջ ապրել։ Յեթե մինչև անգամ նրանք կարողանային ել մտնել մարդու մեջ, միենույն ե—առանց ոգի շնչասպառ կլինեյին։ Միայն աղիքների ճիճուներն են, վորոնք ընդունակ են մարդու ներսում ապրել։ Բայց նրանց կարելի յե հաջողությամբ դուրս քշել։ Պետք ե միայն ժամանակին բժշկի խորհուրդը հարցնել։

Ոձերի և մյուս այլ գեռունների մասին (վորոնք իբր թե մարդու մարմնի մեջ են ապրում) պատմվող հեքիաթների մեջ ելի մի քիչ ճշմարտություն կա։ Ասենք թե մարդու մեկը տեսավ, վոր իրենից մի կես արշինանոց ճիճու ընկափախում ե և կարծում, թե դա ոձ ե։ Կամ թե չե լողանում են կեղտոտ ջրի մեջ, մարմնի վրա բշտիկներ են առաջանում, ինչպես իրենք՝ զյուղացիք են ասում, «ջանը վեր ե տալիս»։ Ել չգիտեն ինչպես բացատրեն և ահա հնարում են մազաճիճուն։ Բայց լինում են և այնպիսի անմիա բաներ, վորոնց մասին կարելի յե ասել,

վոր մարդ կամ յերազումն ե տեսել, կամ  
թե չե, առողջությունը կորցրած՝ խելքից  
դուրս բաներ ե պատմում։ Մեկ ել լսեցիր,  
գյուղում լուր ե տարածվում, թե ինչ վոր կնոջ  
վրա գիշերները կրակե ոձ ե թոշում։ Դեռ այն  
ել են ասում, վոր այս ինչը (խելքը պակաս  
պառավի մեկը) իր աչքերով ե տեսել։

Ակզբում հիվանդը յերդվում ե բոլոր սրբե-  
րով, վոր վոչ մի ոձ չկա, իսկ հետո, վախից  
ինքն ել ե սկսում հավատալ, վոր շար ուժերի յե  
հանդիպել։

Այսպիսի առասպելները մեծ մասամբ հնա-  
րում են մենակ ապրող կանանց մասին, այն կա-  
նանց, վորոնք այրի են կամ վորոնց ամուսինը զին-  
վոր ե։ Վորովհետև այդպիսի կանայք տղամարդ-  
կանց հետ չեն ապրում, շատ շուտ հիվանդա-  
նում են մի տեսակ հիվանդությամբ, վորը  
բժիշկները անվանում են հիստերիա։ Մենակու-  
թյունից և տղամարդու կարոտից նրանք շատ վախ-  
կուտ են դառնում և անհանգիստ։ «Սիրտս կտոր-  
կտոր ե լինում», — գանգատվում են նրանք հա-  
րևաններին։ Բայց այս չի նշանակում, թե նը-  
րանց սիրտը իսկապես հիվանդ ե. պետք ե հաս-  
կանալ, վոր կարոտն ե նրանց մաշում։

Իհարկե, այդպիսի կարոտալի, անհանգիստ  
գրությունը անհետկանք չի անցնում։ Այն կա-  
նայք, վորոնք ավելի համեստ են, սկսում են

աղոթքների ու տրամության մեջ հանգստու-  
թյուն վորոնել, իսկ նրանք, վորոնք ավելի ժիր  
են, սկսում են խմել, նարբել յեվ տղամարդկանց  
հատ ման գալ։ Գյուղում նրանց մասին հա-  
զար ու մի բամբասանք ու խոսք ելսվում։ Այս  
բանից չարացած կանայք ավելի ու ավելի յեն  
հարբեցողությամբ ու անկանոն կյանքով տար-  
վում, առողջություններն ել ավելի քայլայում։ մեկ  
ել տեսար ձայները գլուխները գցեցին ու ը-  
կսեցին գոռգոռալ։ Նույն բանը կարող ե պատա-  
հել աղոթող կանանց հետ։ Ենքան կաղոթի, են-  
քա՞ն կաղոթի, վոր խելքը կկորցնի, կցնիի։ Ել  
ի՞նչ ասես, վոր նրանց աչքին չի յերեվա. ե՛լ  
հրեշտակ ու սատանա, ե՛լ զանազան դեվեր, վո-  
րոնց մասին տերտերն ե յեկեղեցում կարդացել։

Գիտությունն այս գեպքում կամի, վոր այդ  
կինը հիվանդացել ե, նրա ողեղը խանգարվել ե,  
ըժշկել ե պետք։ Գյուղացուն վոր հարցնես, գուրս  
կդա՝ թե գեն ե կախարդել, նրան խելքից հանել,  
և ուրեմն առանց տերտերի ու իերիմի ճար  
չկա։ Մինչդեռ այստեղ միայն մի ճանապարհ կա  
հիվանդին այդ վիճակից ազատելու. — իսկական  
ըժշկությունն ու լորջ գրքովկը։ Ահա այս մի-  
ջոցով ե, վոր խավար մաքերը պարզվում են,  
բոլոր տառապելներն ու սահերը չքանում, ինչ-  
պես ծուխն ե կորչում քամուց, ու գյուղացու  
կյանքը և՛ քաղցր ե գառնում և՛ առողջ։

Մեծ չարիք են պատճառում գյուղացիներին այսպես կոչված հեքիմները։ Մեծ մասամբ դրանք խորամանկ, աղվես մարդիկ են, ինչպես ասում են՝ «խելքները զլխներին»։ Նրանք գիտեն, վոր գյուղացին խավար եւ հավատացող. և այսպիսով նրանք ոգտվում են նրա այդ խավարամտությունից և դյուրահավատությունից։ Խարում են գյուղացիներին և աշքներին թող փչում։

Հեքիմներին ամենից ավելի շատ են հավատում կանայք։ Գրագեաների թիվը նրանց մեջ շատ քիչ ե. բացի գրանից, մինչեւ հիմա նրանք ապրել են միշտ հոգ տանելով իրենց մեծ ու փոքրի, ամանշամանի մասին։ Յարի ժամանակ նրանք մինչեւ անգամ չունեյին այն քիչ իրավունքները, վորոնք տղամարդիկ ունեյին։ Ուրիշ ե պատկերը հիմա։ Խորհրդային իշխանությունն ազատեցարի բռնությունից մեր յերկրի բոլոր աշխատավոր մարդկանց։ Խոկ կնոջը որենքի առաջ հավասարեցրեց տղամարդկանց։ Հիմա նրանք շատ ավելի կսովորեն, քան թե առաջ և շատ ու շատ բաներ նրանց համար հասկանալի կլինի։ Բացի այդ, կնոջ աշխատանքն ել կավելանա։ Նրա տան տշխատանքներին կմիանա յե՛վ հասարակական աշխատանքը։ Մեկը պատգամավոր կլինի, մյուսը գյուղխորհրդի մեջ կընտրվի, — այսպիսով ել ժամանակ չի մնաչեղած բաների մասին մտածելու։

Առաջները գյուղացի տղամարդը գուրսը ելի մի բան լսում, իր միտքը պարզում եր, իսկ կի՞նը միշտ տանն եր լինում, յերեխաների հետ, թոնրի կողքին։ Այս տեսակ միորինակ ու ձանձրալի կյանքից ուղես չուզես զլուխդ ամեն տեսակ սուտ ու դորթ կմանի։ Իմացածներդ ել ինչքան զարմանալի լինեն, այնքան շատ կհետաքրքրվես։ Ահա ինչու հենց վոր հարեանուհիները սըրտները բանալու համար իրար են հանդիպում, ել ծայր չունի հին ու նու ը իրար խառնելն ու հընարելը։ Հետո ել ամեն մեկը ահ ու գողով կըքաշվի իր խրճիթը, ուր մութն ե, լուսավորելու համար նավթ չկա և ամբողջ գիշերը սարսափից կդողա։ Մի ձայն լսելիս տեղից վեր կթռչի և կկարծի, վոր բոլոր գեերն ու սատանաները խոսքները մեկ են արել իրեն կապելու, խելքահան անելու համար։ Պատմում են հաղար ու մի տեսակ հրեշների մասին, վորոնց վոչ վոք չի տեսել, բայց բոլորն ել հավատացած են, վոր դրանք միշտ վնասներ ե, վոր հասցնում են մարդկանց։

Հեքիմին են դիմում վոչ միայն այն գեպքում, յերբ պետք ե ջահել տղին կախարդել, վոր այսինչ աղջկան սիրի, դավաճան ամուսնուն իր կնոջ մոտ վերաբերձնել, ոգնել, վոր գողը հաջող կատարի իր գործը գողանալիս, — այլ և նրան հրավիրում են վրկելու այնպիսի հիվանդություններից, վորոնք վոչ մի բժշկի հայտնի չեն.

պարզ ասած, այնուիսի հիվանդություններից, փորոնք աշխարհիս վրա բնավ գոյություն չունեն; Որինակի համար, ասենք թե մեկն սկսում ե հյուծվել, հալ ու մաշ լինել, դեմքին գույն չի մնում, յերերազով և քայլում, սիրաը վոչինչ չի ուզում ուտել և քանի գնում թուղանում, դրությունը վատանում ե: Հիվանդը գնում ե հեքիմի մոտ, սա ել ասում ե.

— Այդ նրանից ե, վոր մի չար մարդ քեզ հետեւում ե: Հալ ու մաշ կլինես ենքան ժամանակ, մինչև վոր չիմանաս, թե ի՞նչ ե այդ չար մարդու անունը:

— Յես դեհ ի՞նչպես իմանամ. ճար արա, ոգնիր ինձ, վոչինչ չեմ խնայի: Վրս ս ել հալ չի մնացել, ուժից ընկել եմ:

Ել ի՞նչ սուտ ու զորթ ասես, վոր հեքիմը չի դուրս տալիս. ի՞նչ վոր խելքին փչում ե՝ պատմում, վախեցնում ե հիվանդին: Սա յել ուրախ ե, վոր վերջապես գտել ե իր փրկչին. հավ, ձու, յուղ ու ալյուր ե, վոր բերում ե նրան: Ել չի իմանում, վոր իր հիվանդությունը ամենասովորական հիվանդություններից մեկն ե, վատ մնունդից և շատ աշխատելուց ուժապառ ե յեղել, ուրիշ խոսքով՝ մարմնի սեղ քիչ արյուն ե մնացել: Այդ հիվանդությունը այդպես ել կոչվում ե — «արյան պակասություն»: Միակ ճարը այս ե. հանգիստ կյանք վարել սննդա-

րար կերակուրներ ուտել և գեղեր ընդունել: Շատ խելացի կլիներ նա, յեթե յուղն ու հավի միսը հեքիմին աալու փոխարեն ինքն ուտեր:

Հեքիմները մի ուրիշ հիվանդությունից ել են բժշկում: Իբր թե այդ հիվանդությամբ միշտ այն կանայք և յերեխաներն են բռնվում և այնքան սարսափելի հիվանդությունն ե դա, վոր այդ մասին մինչև անգամ բարձր խոսել չի կարելի:

— Ինչո՞վ եք հիվանդ, — հարցնում ես այդպիսի հիվանդին:

— Գլուխս ղժժում ե, յեվ ծայներ եմ լսում: Յերբ տանը մենակ եմ մնում, բոլոր քունջ ու պուճախից ձայն են տալիս, կանչում են:

— Ի՞նչ ձայն, ո՞ւմ են կանչում:

— Աստված գիտե: Հայնոյում են, սպառնում, վոր ինձ կջնջեն աշխարհի յերեսից: Դաշտ գնալիս մեկ ելլսում եմ. «Աննա՛, Աննա՛, աստված խաղաղություն տա քո հոգուն»... Շշմում ես, զլուխդ կորցնում, մեռածի պես շրմփում գետին:

Պարզ ե, վոր այս հիվանդ կնոշը պետք ե լուրջ բժշկել, թե չե այսոր կամ վաղը խելքը բոլորովին կլոցնի: Լավ կը լինի, վոր մի քանի որ նա հիվանդանոցում մնա, մի լավ քնի, հանգատանա: Հիվանդանոցում պետք յեղած խնամքն ունենալուց հետո կարճ ժամանակում միանգամայն կրժշկվի:

Յերբեմն յերեխաները հիվանդանում են ուղե-

ոի հիվանդությամբ. յերեխայի ուշքը վրան չե,  
վոչ վոքի չի ճանաչում, զառանցում և և շուտ  
շուտ վեր թոշում, գոռում, աչքերը չուռմ։  
Այս հիվանդությունը դժվար ե քծշկվում, բայց  
և այնպես յերբ ժամանակին ցույց տան բժշկին,  
կամ հիվանդանոց բերեն (և վոչ թե հեքիմների  
ու ջաղուբաղ պառավների մոտ տանեն), — նա  
կարող ե առողջանալ։

Ել չեմ խոսում զանազան վոգիների մասին,  
վորոնք թե՛ տանը կան, թե՛ անտառում և թե  
ջրերի մեջ։

Ել չեմ հիշում են «չար ուժերի» մասին, վորոնց  
շուրջը ձմրան յերկար գիշերներին պառա վկանաք  
շուրջը շատ հետաքրքիր խոսակցություններ են  
ունենում իրար հետ։ Այդպիսի ուժեր աշխար-  
հում չկան, և ինչ ել վոր դրանց մասին պատմում  
են, այդ հեքիաթները մենք ժառանգություն ենք  
ստացել մեր հեռավոր նախահայրերից։

Մեր որերին, յերբ յերկաթուղիներ կան, շո-  
գենավեր, ելեկտրաքարշ տրամվայներ և ողում  
սավառնակներ են թոշում, — այնուամենայնիվ  
մեղանում անգրագետները դեռ շատ են։ Հին ժա-  
մանակները ամբողջ գյուղացիությունը խավար  
եր ու կարգալ գրել չգիտեր։ Այս պասճառով ել  
ամեն մի անհասկանալի բան նրանց վախեցնում  
եր, և նրանք աշխատում եյին դա բացատրել ինչ  
վոր «չար», սատանայական դիվային ուժերով,

յերբեմն ել գրա մեջ աստծու մատը տեսնելով։  
Հավատում եյին յերազներին, զուշակություն-  
ներին, տեսիլքներին, — այս բոլորը մարդկության  
թշնամի դեմքն եյին վերագրում։ Իսկ յեթե յերաշտ  
երլինում, հրդեհ կամ հեղեղ, անասունների կամ  
մարդկանց մեջ համաճարակ եր ընկնում, — այդ  
արդեն համարում եյին աստծու պատիքը, վորն  
իջնում եր մարդկանց զլիին, նրանց գործած  
հանցանքների համար։

Այսպես ել յերկյուղի մեջ ապրում եյին,  
վախենալով մի կողմից դեմք, մյուս կողմից աս-  
տծուց և աշխատում եյին վողորմած պահել թե  
մելիին յեվ թե մյուսին, վորպեսզի մի կերպով  
ազատվեն չարիքեց, մինչև վոր մի որ ել կմեռ-  
նեն ու կպահնեն այս աշխարհից։ Աստծու ա-  
նունով մոմեր եյին վառում, զանգեր շինում ու  
հնչեցնում, նրա պատկերին ծունկի գալիս, պա-  
տարագ անում ու աղոթում։ Դեմք համար զոհա-  
բերում եյին չգիտես ինչու անպատճառ սև կա-  
տու, սև աքաղաղ, սև այծ չար ուժերից գլուխ  
պրծացնում զանազան կախարդություններով ու  
անեծքներով։

Յերբ գրագիտությունն սկսեց տարածվել,  
յերբ դպրոցներ բացվեցին, գրքեր տպվեցին և զիտ-  
նական մարդկի յերեացին, շատ բան, վոր առաջ  
անհասկանալի յեր, հիմա հասկանալի դարձավ  
և անհավատությունը մեջտեղից վերացավ։ Հի-

մա մինչեւ անգամ ամեն մի գյուղացի տղա զիստե, վոր կայծակն ու վորոտը ելեկտրականությունից են առաջ գալիս և վոչ թե նրանից, վոր Յեղիա մարգարեն ե իր կառքով ման գալիս յերկնօռում: Յեվ վոչ մի գյուղացի հիմա չի գարմանա ու վախենա ավտոմոբիլ տրամվայ. կամ ելեկտրական լուսավորություն տեսնելիս, նա չի զարմանա, յերբ խոսք լինի հեռագրի կամ հեռախոսի մասին, վորոնք բոլորն ել գործում են եւելքուրական ուժով և վոչ թե չարքերի ուժերով: Մինչեռ այնքան հեռու չե այն ժամանակը, յերբ գյուղացիք, առաջին անգամ շոգեմեքենա տեսնելով, դուրս եկան նրա զեմ խաչ ու խաչվառով, հավատալով, վոր շոքեմեքենայի մեջ զե կա նստած:

Այսպիսով աստիճանաբար, գիտության զարգանալով և տնտեսության յեղանակները լավանալով, ամեն տեսակ վիտսակար ու անմիտ մնանավատություն ողը կցնողի: Միահամուռ ջանքերով խորտակենք դարավոր տգիտության պատճենները և աշխատենք, վոր շատ դպրոցներ բացվեն յեվ շատ գրքեր տպվեն: Այդպիսով կիրականանա կենինի բուռն ցանկությունը և մեր՝ դեռևս խավար ու հետամեաց յերկերը կլուսավորվի, կփայլի յելեկտրական կրակներով ու մեզ համար մի նոր, պայծառ և ուրախ կյանք կսկսվի:

Ա.Խ.Հ.Մ. ԺՈՂՈՎՐԴԻՇՆԵՐԻ ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԱԵԽԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Լույս են տեսել՝ 1) Լենինի պատգամները յերիտասարդության.  
2) Լենին. — Ի՞նչպես պետք է լինի կոմյերիտը.

ՍՈՅ-ՔԱՎԱՐՔԱԿԱՆ ԸՆԹՔ

- Լույս են տեսել՝ 1) Ստալին. — Գյուղացիական հարց.  
2) Ստալին. — Աղջային հարց.

ԳՅՈՒՂԱՅԻՑԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Լույս են տեսել՝ 1) Լիվինսկի. — Գյուղատնտեսական հարկ.

2) Աստծու կամքը թե՝ գյուղ, զիտությունը.

3) Ռուգեն. — Գյուղաց, հողաշինարարության այրութենը.

4) Մարգկային բնակարանի պատմությունը.

5) Վլասով. — Հողն ինչպես մշակել յերաշտի ժամանակ.

6) Դմիտրյալվա. — Տղիտությունը և սնանավատությունը.

7) Լ. Իյովեփովիչ. — Կեղ կանգնի գերան կկոտրի (կոռպեհմասին).

ԽՈԲՀՐԴԱՅԻՆ ԳՐԱՊԻՏԵ ԳՐԱԾԱՐՔ

- Լույս են տեսել՝ 1) Եսիպով. — Գյուղացիության պահանջները և խորհրդ. գպրոցի ծրագիրը.

2) Լենինի պատգամները լուսավորության խնդրում.

3) Ազգային հարցը և գպրոցը.

4) Նեվերվով. — Ի՞նչպես ելին ապրում ափնիկները (մանկական):

ԳԻՆԸ 15 Կ.

1  
2

«Ազգային գրադարան



NL0161487